
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՆԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հոգվածում քննարկվում են լեզվի հիմնահարցը հայկական լուսավորականության մեջ, գրաբարից անցումն աշխարհաբարին: Մասնավորապես առաջ են քաշվում գրաբարից աշխարհաբարին անցման երկու իրարամերժ տեսանկյուն, փաստարկներ ու հակափաստարկներ: Լուսավորական թևի ներկայացուցիչները հիմնավորում էին գրաբարից աշխարհաբարին անցումը ժամանակավրեպությամբ և հին լեզվական համակարգի անկենսունակության տեսանկյունից, այնինչ պահպանողական թևի ներկայացուցիչները շեշտադրում էին լեզվի և մտածողության կապը, դրա ազդեցությունն ազգային ինքնության պահպանման գործում: Լեզվի հիմնահարցն ազգային ինքնության համատեքստում քննարկելիս շեշտադրվում է նաև պատմական հիշողության տեսանկյունը:

Բանալի բառեր – լեզու, մտածողություն, գրաբար, աշխարհաբար, պատմական հիշողություն, ազգային ինքնություն:

Ազգային ինքնության կառուցվածքի կարևորագույն բաղադրիչներից է լեզուն, որն ամփոփում է տվյալ ազգի աշխարհաճանաչողությունը, իրերի և երևույթների սահմանումը, մշակույթը, պատմական հիշողությունը և այլն: Լեզուն ոչ թե ինքնաբավ մեծություն է, այլ մտածելակերպ, գործելակերպ և գոյելակերպ¹: Այն ոչ միայն նշանային համակարգ է, այլև որոշակի զգայակերպ, շնորհիվ որի արտացոլվում է ազգային ինքնությունը: Ուրեմն, լեզուն կարելի է և պետք է դասել, ի թիվս ազգային ինքնության կառուցվածքի, առաջնային այլ գործոնների շարքում: Եվ, ինչպես լեզվական բազում այլ համակարգերի պարագայում, հայոց լեզուն իր քերականական և լեզվական կառուցվածքով տակավին ենթարկվում է բազում փոփոխությունների, որի հերթական և շրջա-

¹ Տե՛ս Աթայան Է., Հոգի և ազատություն, Եր., 2005, էջ 106:

դարձային փուլը հայոց պատմության մեջ լուսավորականության՝ դարաշրջանն է: Պատմական հենց այս իրադրությունում գրաբարի և աշխարհաբարի համարտության լուծումը հոգուտ աշխարհաբարի հանդիսացավ կենսական և վճռորոշ՝ անհրաժեշտություն առաջացնելով վերիֆիկացնել լեզվական համակարգը, ինչի պատճառը հստակ էր. բանավոր և գրավոր լեզուն չէն համապատասխանում մեկմեկու. հրատապ է գոյության իրավունք տալ այս երկուսից միայն մեկին: Հայ ժողովուրդն արդեն իսկ իր էթնիկ փորձով և գիտակցությամբ կիրառում էր աշխարհաբարը՝ որպես հաղորդակցման լեզու: Այսպիսի իրադրությունում գրաբարը հոգևորականության և մտավորականների կողմից կիրառվող լեզվի կարգավիճակի էր արժանացել, իսկ աշխարհաբարն առավելապես զանգվածային, չհղկված, մեծամասնության մշակույթին բնորոշ ժողովրդական լեզու էր, որը լայն տարածում ուներ: Թատերական ներկայացումները, ժողովրդական երգերն աշխարհաբար էին, և, թվում էր, միայն գրականությունն էր անմասն անդառնալի այն փոփոխություններին, որոնք տեղի էին ունենում բնականորեն, առանց պարտադրանքի:

Մտավորականության այն հատվածը, որը լուսավորականության գաղափարներով էր ոգեշնչված, գրաբար թե աշխարհաբար երկընտրանքում միանշանակ գերակա էր համարում աշխարհաբարը: Զե՞ որ լուսավորականության գործիքներից մեկը լեզուն էր, քանզի լուսավորելն ինքնին ենթադրում էր տիրապետել և կիրառել առավել լայն զանգվածներ ընդգրկող նշանային համակարգ, որը մատչելի էր շատերին: Իսկ առավել պահպանողական թևի ներկայացուցիչներն ունեին իրենց հակափաստարկները՝ ի հակակշիռ աշխարհաբարի:

Լեզվական համակարգում գրաբարից աշխարհաբարին անցնելու կողմնակիցներն էին Խ. Աբովյանը, Գր. Օտյանը, Մ. Նալբանդյանը, Րաֆֆին և ժամանակի շատ այլ մտավորականներ: Որպես գրաբարից աշխարհաբարին անցնելու հիմնավորում՝ նշվում էր հետևյալը. «Ազգային յառաջադիմութեան

* Հայոց պատմության մեջ XVIII դարի վերջի և XIX դարում ծավալվող շարժում, որի նպատակն էր հայկական ինքնության լուսավորական նախագծի կենսավորումը, որը պետք է նպաստեր ազգային ինքնագիտակցության փոփոխմանը և զարթոնքին: Այն որոշակի արձագանք էր եվրոպական լուսավորականությանը, որը շարժում էր ֆեոդալիզմի, կաթոլիկական եկեղեցու դեմ՝ նպատակ ունենալով բարձրացնել գիտության և գիտելիքի դերը հասարակության մեջ, ձևավորել իր պարտականություններն ու իրավունքները գիտակցող անհատ: Առաջադրված նպատակներին հասնելու միջոցներ էին գիտությունների զարգացումը և դրա շնորհիվ լուսավորականության տարածումը:

ոսկեդարը կարծրված ժամանակ մը՝ ուր ազգին մէջ ուսումնասիրութիւն արծարծելու և ուսումը տարածելու համար շատ միջոցներ գործի կը դրվին. Այսպէս շատերուն երջանիկ համբաւած ժամանակ մը, ուր գրելու քիչ շատ եռանդ կը տեսնվի ազգին մէջ. Հարկավոր էր որ մինչև հիմա մեր երկու, հին ու նոր լեզուներուն մէկը հասարակաց լեզու որոշված ըլլար. Լեզու մը՝ ամենուն հասկընալի, դիրքին ու պարզ ոճով, որ գրելու դժվար չըլլայ. Լեզու մը, որ այս յատկութիւններէն զատ կարգ ու կանոն ունենայ»²: Իսկ այդ լեզվի դերը կարող էր ստանձնել միայն աշխարհաբարը: Ինչու՞: Նախ գրաբարի ուսուցանումը ժամանակատար էր, խրթին, ի լրումն այս ամենի առավել *դյուրին էր խոսակցական լեզուն դարձնել նաև գրի լեզու*:

Վերոնշյալից բացի, կային նաև երկրորդային գործոններ, որոնք ևս գրաբարի տարածումն անհեռանկար էին դարձնում: Այն է՝ լեզվի տիրապետման սահմանների տոկոսային փոքրաթիվությունը, գրաբարին տիրապետող սակավաթիվ այն ուսուցիչները, ովքեր կարող էին ուսուցանել այդ լեզուն և բացի այդ ժամանակային անհամամասնությունը. գրաբարը ներդնելու համար մոտ կես կամ մեկ դար էր անհրաժեշտ, իսկ այդպիսի ժամանակահատվածն աղետալի էր պետականություն չունեցող ազգի համար և կարող էր արգելակել լուսավորական շարժումը: Հօգուտ աշխարհաբարի՝ կարելի է նաև նշել այլ լեզուների հավանական մուտքը հայոց լեզվի համակարգ: Չունենալով անկախություն և գտնվելով օտար տիրապետության ներքո՝ այլ լեզուների մուտքն առավել դյուրին կարող էր լինել. այլալեզու գրականության ընթերցումը սպառնում էր մոռացության մատնել ազգային լեզուն: Եվ օգտակարության տեսանկյունից, նժարին դնելով այդ երկու լեզուների կիրառումը, Գր. Օսյանը նշում է, որ աշխարհաբարը թեև ռամիկների լեզու է, բայց այն կատարելագործելու պարագայում կարող ենք դարձնել մեկ միասնական լեզվական համակարգ, որով կխոսի և՛ ռամիկը, և՛ քաղաքացին, բացի այդ . « Մեր յոյսն այն է, որ այսպիսով քիչ-քիչ գրաբար լեզուին ոճերը մտցընելով աշխարհաբարին մէջ և բառերն ալ իրենց աղաւաղ կերպարանքէն մերկցընելով, և հին ձեւերնին և ոյժերնին տալով, կրնանք օր մը անզգայաբար հասնիլ գրաբարը հասարակաց լեզու ընելու»³: Ինչու ոչ, սա նաև միջոց էր հետագայում գրաբարի ներդրման և տարածման համար: Թեև, ըստ լուսավորականների, գրա-

² **Օտեան Գ.**, Առաջարկութիւն աշխարհաբար լեզուն կանոնաւորել եւ հասարակաց լեզու ընելու վրա, Կ. Պոլիս, 1851, էջ 1:

³ Նոյն տեղում, էջ 11:

բարը դիակ էր, որը կենդանացնել հնարավոր չէր, իսկ կենդանի կյանքի համար անհրաժեշտ էր կենդանի խոսք⁴:

Գրաբարից աշխարհաբարին անցնելու հարցում լուսավորականները միակարծիք էին և առանց երկմտելու կրկնում էին նույնը՝ կոչ անելով անցնել այնպիսի լեզվի, որով առավել արդյունավետ կլիներ հայ ժողովրդին հաղորդակից դարձնել ազգի, հայրենիքի, անկախության գաղափարներին և դրանց միասնության շնորհիվ պետականության ձեռքբերմանը: Չտալով որակական գնահատական բուն գրաբար լեզվին և նրա միակ իրավունքը համարելով գեղեցկությունը՝ լուսավորականները շեշտադրում են աշխարհաբարի օգտագործման արդյունավետությունը. «Փոխանակ հրաժարվել հին դասական լեզուներին յատուկ, բարձր մութ, խրթին ձևերից և ճառական ոճերից և մտցնել պարզ խօսակցութեան թեև անտաշ ոճերը մենք շարունակեցինք ժողովրդի համար անհասկանալի կերպով գրել, սրբապղծութիւն համարելով փոփոխութիւններ անել դարերով օրինացված ձևերի մեջ»⁵: Այս կոչի պատասխանն էր Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, որը վավերացրեց աշխարհաբարը նաև որպես գրի լեզու՝ սկիզբ դնելով աշխարհաբարի գործածությանը:

Նախանոյանը, առաջ անցնելով վերոնշյալ փաստարկներից, հին լեզվի կիրառման մեջ է տեսնում նաև մատենագրության բացակայությունը: Չունենալ մատենագրություն նույնն է, թե զրկված լինել բանականությունից: Չէ՞ որ մատենագրությունը բանականության պահարանն է, իսկ մինչ աշխարհաբարին անցնելը հայոց մատենագրությունը եղել է արեղայական⁶: Լուսավորականների մեկնաբանությամբ արեղայական մատենագրության գոյությունը համարժեք է վերջինիս չգոյությանը: Հատկապես երբ մեկ ազգի պատմությունը նախևառաջ բանականության, այլ կերպ գիտակցության պատմություն է, ապա այս մեկնաբանության համատեքստում հին լեզվի կիրառումն արգելակում է հայ ժողովրդի առաջընթացը, զրկում նրան բանականությունից: Միակ ելքը նորը կերտելն է՝ նոր մատենագրություն, նոր պատմություն, նոր գիտակցություն: Հին լեզվի դերի մասին նախանոյանական մեկնաբանությունը հստակ սահմանագիծ է անցկացնում մինչլուսավորական հայ մշակույթի, պատմական հիշողության և լուսավորական ժամանակաշրջանի միջև:

Լեզուն, անշուշտ, մտածողություն է, գոյության կերպ, մշակույթ և պատ-

⁴ Տե՛ս Արծրունի Գր., նշվ. աշխ., էջ 150:

⁵ «Մշակ», Թիֆլիս, 1872, թիւ 14:

⁶ Տե՛ս Նախանոյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1947, էջ 146:

մական հիշողություն: Նոր մտածողությունը ենթադրում էր նոր համակարգ՝ իր հերթին հաղթահարելով լեզվական ավանդապաշտությունը: Թեև, ի հակա-կշիռ նախանշյանական ծայրահեղականության, աշխարհաբարին անցնելու լուսավորականների առաջադրած փաստարկերը սին էին համարում պահ-պանողական թևի ներկայացուցիչները: Նրանցից ամենամարտնչողներն ու ծայրահեղականները Հ. Տերոյենցը և Գ.Այվազովսկին էին: Լինելով պահպա-նողական թևի ներկայացուցիչ՝ Տերոյենցը քննադատում է լուսավորակա-նություն երևույթն ինքնին՝ դրա առանձին դրսևորումները ենթարկելով խիստ և անզիջում քարկոծման: Մասնավորապես անդրադառնալով գրաբարից աշ-խարհաբարին անցնելու անհրաժեշտությանը՝ Տերոյենցը խստորեն քննադա-տում է լուսավորականներին՝ նրանց այդ նախաձեռնությունը համարելով ան-ընդունելի: Հավատը նորոգողները, ըստ նրա, փորձում են նորոգել նաև լե-զուն⁷: Այս տեսակետի ներկայացուցիչները համարում են, որ լեզուն և միտքը, լինելով փոխակապակցված, անմիջականորեն անդրադառնում են ազգային ինքնության կառուցվածքի վրա, և լեզվի փոփոխությունն անխուսափելիորեն հանգեցնում է աշխարհայացքային փոփոխությունների, ինչը բացասաբար է ազդում ազգային ինքնության պահպանման վրա: Ինչպես նշում է լեզվաբան-ներից մեկը. «Մի ազգ, մոռանալով իր մայրենի լեզուն, կորցնում է իր բնական միջոցներից մեկը, ուրեմն կպակասի, կնուազի նորա բնական զարգացման, նորա անհատական յատկությունների, նորա ինքնուրոյնութեան, ուրեմն նորա հասարակաց օգտի համար արդիւնաբերութեան ոյժը»⁸: Անդրադառնալով գրաբարին և աշխարհաբարին՝ հատկանշական է պահպանողական թևի ներ-կայացուցիչների այն դիտարկումը, որ կարելի է գրքեր գրել նաև գրաբարով և դրանք հասու դարձնել ժողովրդին, ինչին լուսավորականները հակադրվում են այն փաստարկով, որ այդ գրքերը կմնան գրադարակին և ոչ ավելի:

Այս երկու ծայրահեղ կարծիքների մեջտեղում են Ս. Տյուսաբի դիտար-կումները գրաբարից աշխարհաբարին անցնելու առնչությամբ: Վերջինս քննարկում է արդեն իրողություն դարձած աշխարհաբարի թերությունները: Տյուսաբը պահանջում է ստեղծել աշխարհաբարի կանոնադրություն, այլապես գրաբարից անցումն աշխարհաբարին դատապարտված է վերածվելու հետ-ընթացի: Նա իրավացիորեն նշում է. «... ամեն ոք իւր անձնական ճաշակին հետեւելով լեզուին մեծածաւալ դաշտին մէջ չքնաղ մտաւորական ծաղիկներ

⁷ Տե՛ս **Տերոյենց Հ.**, Բանադատ, Ի Կոստանդնուպօլիս, 1860, էջ 60:

⁸ «Մշակ», Թիֆլիս, 1872, թիւ 11:

սփռեց աստ և անդ, առանց փունջ մը կազմելու ներդաշնակությամբ միաւորեալ»⁹: Տյուսաբը, այսպիսով, շեշտում է աշխարհաբարից գրաբարին ոչ սահուն անցումը և այդպիսի պարագայում լեզվի լողացող համակարգի առկայությունը: Նավ, որը չունէր նավավար, ուրեմն և զարգանում էր անկանոն: Այլ էր աշխարհաբարի կարգավիճակը՝ որպէս առօրյա խոսակցական լեզու, և լրիվ այլ էր վերջինիս կարգավիճակը՝ որպէս գրի լեզու: Իսկ այդ առումով այն հղկելու և համակարգելու անհրաժեշտություն ուներ, քանի որ իր կառուցվածքով պարզ էր և դյուրին, իսկ քերականորեն այն պետք է լինէր համակարգված: Բացի այդ, գրաբարից աշխարհաբարին անցնելով՝ արագորեն լեզվական համակարգ ներառվեցին օտարաբանություններ, որոնք հայացնելու, թարգմանելու անհրաժեշտությունը ևս համարվեց իրեն սպառող և ժամանակավրեպ մեթոդ: Ինչ պարտադիր է եզրույթները հայերեն դարձնել, եթե կարելի է դրանք օգտագործել բուն լեզվով: Մաքրախոսությունը երբեմն վերածվում է մթնախոսության՝ բուն եզրույթի իմաստը դարձնելով անըմբռնելի¹⁰: Նման մոտեցմամբ առաջնորդվելը հայոց լեզուն հարստացրեց օտարաբանություններով և չթարգմանված եզրույթներով, ինչին առնչակից ենք մինչև այժմ:

Հատկանշական է դիտարկել նաև լեզվի հիմնահարցը պատմական հիշողության տեսանկյունից և անդրադառնալ նաև այլ տեսաբանների: Հ. Սըվաճյանը, Հ. Ասատրյանն աշխարհաբարին անցումը քննարկում են բացառապես պատմական հիշողության և ազգային ինքնության տեսանկյունից: Հ. Սըվաճյանը նշում է. «Անցյալը մեռավ, նախնիք ալ մեռան, դժբախտաբար անոնց խոսած լեզուն ալ մեռավ, չիուանք, որ մեռելը կենդանանա: Աշխարհիս վրա, մինչև այսօր, ոչ մի մարդ մը տեսվեցավ, որ մեռնելէն ետև բնական կերպով հարություն առնէ, ոչ մեռյալ լեզու մը նմանապէս, որ կենդանանա: Լեզու մը պետք է անշուշտ ազգի մը, անկարելի է և գրաբարը մեր ազգին լեզու ընել, ուզենք չուզենք աշխարհաբարն է իր լեզուն և պիտի ըլլա»¹¹: Եվ իրոք, գրաբարից աշխարհաբարին անցումը թեև ժամանակաշրջանի պահանջն էր, սակայն այն իր գոյությամբ ոչ այնքան խնդիրներ լուծեց, որքան ստեղծեց: Այս մասին փաստում է նաև Հ. Ասատրյանը. «...19-րդ դարում սկսած մեր վերածնությանը, չկարողացաւ յօգուտ գիտական-իմաստասիրական մտածման արդիւնքների որդեգրման՝ մի ուղեփոխութիւն առաջ բերել: Միւս կողմից՝ հենց

⁹ Տիխաբ Ս., Աշխարհաբար հայ լեզուն, Կ. Պոլիս, 1880, էջ 11:

¹⁰ Տե՛ս Նազարյան Ստ., Հանդէս նոր հայախօսութեան, Մոսկվա, Առաջին մաս, 1857, էջ դ-ե:

¹¹ Սըվաճյան Հ., Հրապարակախոսական հատընտիր, Եր., 1960, էջ 474:

նոյն վերածնության շնորհիւ, ասպարէզից վտարած գրաբարի հետ, հների ստեղծած արժէքներն էլ դարձան, գրեթէ, մեռեալ տառ»¹²:

Հայկական ինքնության արդիականացման համատեքստում լեզվական գործոնի արծարծումը և փոխակերպումը, սակայն, հղի էին մեկ այլ վտանգով: Իսկ ի՞նչ կարգավիճակ պետք է ունենա մինչ այդ ապրող պատմական հիշողությունը: Պետք է այն անտեսվի՞, թե՞ պետք է թողնել գրադարակին՝ որպէս հուշարձան: Չէ՞ որ պատմական հիշողությունը պահպանվել էր գրաբարով, և դրա դարակներում էին անթելված հայ ժողովրդի անցած պատմությունը, առասպելները, մշակույթը: Աշխարհաբարը վավերացնելու պարագայում ո՞րն էր լինելու նախորդող պատմությանը, գրական հուշակոթողներին հաղորդակից դառնալու միջոցը: Թերևս լուսավորականների ապագայամետ նախագիծն իր բնույթով սպառում է այս հարցադրումները և որևէ կերպ դեպի անցյալ տանող ուղի չի թողնում: Չէ՞ որ լուսավորականության իդեալն ապագան էր, իսկ անցյալը նրանց համար դեռևս անցյալ չէր, քանի որ լինելով պատմական ընթացքի մեջ և հաղորդակից դառնալով անցյալի հայ մշակույթին՝ նրանք ինչ-որ չափով դրա կրողն էին, և լինելիության մեջ դրա բացակայության մասին մտածելը թերևս անտեղի էր: Իսկ մեր՝ XXI դարից հետոյացք նետող հայի համար անցյալն անընթեռնելի է, և դրան կարող ենք միայն հաղորդակից դառնալ թարգմանչի միջոցով, ում գրական ճաշակին էլ պետք է ապավինենք հայ ժողովրդի պատմական հիշողությանը հաղորդակից դառնալը: Ներկայումս գրաբարը միայն նեղ մասնագետների լեզու է և իրականություն դրա դիակ լինելու փաստը: Եվ այն հարցին, թե ինչ պետք է անեին լուսավորականները, եթե լեզուն ինքնին բնականորեն գործածությունից դուրս էր եկել և բնորոշվում էր անկենսունակությամբ, մնում է պատասխանել հին և նոր ինքնության երկընտրանքի հարցադրմամբ: Ի՞նչ գրական ժառանգություն է ստեղծվել մինչլուսավորական շրջանում և լուսավորական շրջանից սկսած: Բացի այդ, վերլուծելով արևմտահայերենը և արևելահայերենը, ակնհայտ են դառնում տարբերությունները: Արևմտահայերենում գրաբարի հենքի պահպանմամբ է փոխվել լեզվի կառուցվածքը, և այդ լեզվական համակարգում գրեթե բացակայում են օտարաբանությունները, ի տարբերություն արևելահայերենի, որի պարագայում գրաբարից ոչինչ չի պահպանվել, և այն հարուստ է բազում օտարաբանություններով:

¹² Ասատրյան Հ., Արթնացի՛ր, հա՛յ մարդ, Եր., 1998, էջ 10:

ПРОБЛЕМА ЯЗЫКА В ПРОСВЕТИТЕЛЬСКОМ ПРОЕКТЕ МОДЕРНИЗАЦИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

НАНЕ МОВСИСЯН

В статье обсуждается проблема языка в период армянского просветительства, переход от грабара к ашхарабару. В частности, выдвигаются два противоречащих друг другу мнения по поводу перехода от грабара к ашхарабару, аргументы и контраргументы. Представители просветительского крыла объясняют упомянутый переход отсутствием жизнеспособности старой языковой системы, в то время как представители консервативного крыла акцентируют связь между языком и мышлением, ее влияние на сохранение национальной идентичности. При обсуждении проблемы языка в контексте национальной идентичности подчеркивается также аспект национальной памяти.

Ключевые слова – язык, мышление, грабар, ашхарабар, национальная память, национальная идентичность.

THE ISSUE OF THE LANGUAGE IN THE CONTEXT OF THE ENLIGHTENMENT PROJECT OF MODERNIZATION OF ARMENIAN IDENTITY

NANE MOVSISYAN

The article discusses the issue of the language, particularly, the transition from literal to modern Armenian during the Armenian Enlightenment. Two contradictory views, arguments and counterarguments to the transition from literal to modern Armenian are put forward. The supporters of the enlightenment wing come up with the idea of anachronism and non-viability of the old language system, while the representatives of the conservative wing emphasize the link between language and reason and its influence on the preservation of national identity. When discussing the issue of language in the context of national identity, the aspect of historical memory is highlighted too.

Key words – language, reason, literal language, modern language, historical memory, national identity.